

ՄԱՅԻՍ

Հարեկան գինը 10 բուրի, կէս տարվանը 6 բուր.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործադիր մարմիններ. Օգնութեան գործը.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական աշխա-
տանքներ. Գաղթական-կարօտեալները. Սովետներ.
Ռուսաց թմարուն. Նամակ Արասթուն-
մանից. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտա-
քին լուրեր.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲՈՎԱՆԴԱԿԱՆ. Ֆիզիքական կրթութիւնը
դպրոցներում.

ԳՐԻԳՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ինչպէս յայտնի է այս տարի Հասարա-
մեջ Ռուսաստանում երկրագործութեան մի-
նիստութիւն, որը սկսել է արդէն իր կա-
նոնաւոր գործունէութիւնը: Պետերբուր-
գում, մինիստրութեան մէջ, այժմ տեղի ու-
նի մի խորհրդակցական ժողով, որին
մասնակցելու համար հրաւիրված են զա-
նազան տեղերից յայտնի գիւղատնտեսներ:
Այդպիսի ժողովներ պէտք է տեղի ունե-
նան պարբերաբար, տարին երկու անգամ:
Այդ ժողովների միջոցով մինիստրութիւնը
յոյս ունի լսել երկրագործների կարծիքնե-
րը և հոգի այդ ներկայացուցիչների օգնու-
թեամբ մշակել զանազան խնդիրներ և ծրա-
գիրներ:

Այդպիսով մինիստրութիւնը յոյս ունի
աւելի նպատակաւոր և գործնական ձե-
տալ իր նախագծերին և ձեռնարկութիւն-
ներին, աշխատելով մի կողմից՝ ազատ մնալ
այնպիսի սխալներից, որոնց գլխաւոր պատ-
ճառը լինում է երկրի հանգամանքների և
պայմանների անձնաօթութիւնը և միւս
կողմից՝ կատարելագործել երկրագործու-
թիւնը այն փորձերով, որ ներկայացնում է
գործնական կեանքը:

Սակայն այդպիսի ժողովներով դեռ չեն
կարող տնտեսական բարեփոխումներ իրա-
գործվել կեանքի մէջ: Հարկաւոր են ուրիշ
ոչ ժողով, ուրիշ հիմնարկութիւններ, գործա-
դիր մարմիններ, որոնք երկրի զանազան
մասերում, գաւառներում, գիւղերում, կա-
ռուածքներում, տեղի ու տեղը մտնելին
տնտեսական բարեփոխութիւններ:

Ո՛վ պէտք է իրագործի այդ նպատակնե-
րը և ո՛վ կարող է այդ անել:

ԲՈՎԱՆԴԱԿԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

(Գաղութական առողջապահութիւն—IX)

Մեր դպրոցական կեանքում դեռ խնդիր չէ
ծագել աշակերտների ֆիզիքական կրթութեան
մասին, և այժմ երբ այդ հարցը հասունացած է,
մենք յուսով ենք, որ մեր դպրոցներում կընդուն-
վի այն ձևը, որը թէ հարկաւորապէս փորձը և թէ
գիտութիւնը միակ ընդունելին է դարձրել:

II. Ֆիզիքական կրթութեան ձևը, որը համա-
պատասխան է վերոյիշեալ պահանջներին—այդ
բնական վարժութիւնն էր նա, այսինքն
խաղը:

Խաղը դպրոցական մանկան համար միակ
ցանկալի և միակ կարեւոր ֆիզիքական կրթու-
թիւնն է: Խաղի միջոց շարժումները բոլորը բնա-
կան են և հեշտ կատարելի: Խաղը պահանջում է
մարմնի մկաններների բոլորի մասնակցութիւնը.
Նրա ամենազգացաւոր մասը վաղն է, որը ընդուն-
ված է իբրեւ ամենալաւ վարժութիւն արեան հո-
սանքը արագացնելու և հետեւաբար, թէ սրտի և թէ
թոքերի գործունէութիւնը զարգացնելու:—Ար-

Ահա մի հարց, որն այժմ սաստիկ զբա-
ղեցնում է թէ մինիստրութիւնը և թէ այն
շրջաններին, որոնց համար երկրագործու-
թեան առաջադրութիւնը կենսական խն-
դիր է համարվում: Առաջարկված են մի
քանի ծրագիրներ՝ այդ հարցը վճռելու
համար: Մի քանիսը առաջարկում են այդ
գործը յանձնել գիւղատնտեսական ընկերու-
թիւններին, միւսները—գէմնաօթին, ուրիշ-
ները նոր կազմվելիք մի այնպիսի հասարա-
տութեան, որը բաղկացած լինէր գաւառում
նշանակութիւն ունեցող ամեն տեսակ անձ-
նագործութիւններից, նահանգապետի նախա-
գահութեան ներքոյ:

Թէ գէմնաօթները և թէ գիւղատնտես-
ական ընկերութիւնները կարող են աջողու-
թեամբ կատարել այդ գործը: Զէմնաօթն
ունի այն առաւելութիւնը, որ նա շատ
մօտ լինելով ժողովրդի բոլոր խաւերին, ու-
նենալով ամեն տեղ գործակալներ, մի և
նոյն ժամանակ կարողութիւն ունի դրամա-
կան միջոցներ ձեռք բերել, որովհետեւ նա
կարող է տնտեսական բարեփոխման հա-
մար յատկացնել եղած գումարների մի մա-
սը, կամ սահմանել նոր տուրք: Զիշդ է,
գէմնաօթները մինչև այժմ շատ դժու-
ր կատարել տնտեսական կեանքի բարեփոխ-
ման համար. բայց դրա պատճառը մասամբ այն
է, որ նրանք այդ գործը մտքած չեն ե-
ղել իրանց գործունէութեան ծրագրի մէջ:
Իսկ այն գէմնաօթները, որոնք գործել են
այդ ուղղութեամբ, շատ աջող հետեւե-
րեր են հասել:

Գիւղատնտեսական ընկերութիւնները,
ձիշդ է, նոյնպէս ունեն այն առաւելու-
թիւնները, որ նրանք յատկապէս նուիրված
են գիւղատնտեսական խնդիրներին և մշա-
կում են առաջադիմելու նոր միջոցներ, բայց
չունեն այն յարմարութիւնները, որ կար-
գանան ժողովրդի զանազան խաւերում ի-
րանց ցանկութիւնները տարածել և մեծ
մասամբ զուրկ են դրամական մեծ միջոց-
ներից: Գիւղատնտեսական ընկերութիւննե-
րի գործունէութիւնը շատ օգտաւէտ և
կարեւոր է, բայց նա կատարելիք գործի մի
մասն է միայն:

Ինչ վերաբերում է նոր ծրագրով այն
հասարատութիւններին, որոնք պէտք է մի
տեղ ժողովեն նահանգական կենտրոնի բո-
լոր պաշտօնական հիմնարկութիւնների ներ-

կայացուցիչներին և գիւղատնտեսներին,
միասին խորհրդակցելու, նրանք չեն կարող
երբեք ցանկալի նպատակների բաւարար իրա-
գործողներ լինել: Գրանք կը լինեն ժողովներ,
կազմված այնպիսի անձինքներից, որոնք
անձնաօթ են գիւղատնտեսական խնդիրնե-
րի հետ, և որոնք զբաղված լինելով պաշ-
տօնական գործերով, շատ անկանոն կերպով
կը յաճախեն ժողովները:

Այդպիսով տեղական ամենանպատակա-
յարմար մարմիններ կը մնան գէմնաօթն և
գիւղատնտեսական ընկերութիւնները: Իսկ
մինիստրութիւնը, բացի այդ, պէտք է ու-
նենայ իր անմիջական գործակալները, գոր-
ծադիր մարմինները, կազմված մասնագէտ-
ների մի ամբողջ խմբից՝ մի տեսչի գլխա-
ւորութեան ներքոյ, որոնց համար սահ-
մանված կը լինի գործունէութեան մի ո-
րոշ շրջան, մի կամ մի քանի նահանգներ:
Մասնաւորելով խնդիրը մեր Անդրկովկա-
սի վերաբերմամբ, պէտք է նկատենք, որ
այստեղ մինիստրութիւնն ունի մասնագէտ-
ների կազմակերպված մի խումբ, որը գոր-
ծում է կանոնաւոր կերպով. իսկ ինչ վե-
րաբերում է տեղական հասարատութիւննե-
րին՝ գէմնաօթ մեզանում դեռ չէ մտքած,
իսկ գիւղատնտեսական ընկերութիւնը միայն
մէկն է, այն էլ ոչ աւելորդ, միայնակ ա-
ջող գործունէութեամբ: Յանկալի է, որ
գիւղատնտեսական ընկերութեան բաժան-
մունքներ բացվել են և մեր գաւառներում
ինչպէս այդ կայ արդէն Գուլիստում:

Այստեղ կարեւոր ենք համարում յիշեց-
նել մեր ընթերցողներին, որ քանի մեզա-
նում չը կայ գէմնաօթի նման մի հասարա-
տութիւն, որ կարողանար դրամական մի-
ջոցներ ձեռք բերել և գործել անմիջապէս
ժողովրդի մէջ, կարեւոր նշանակութիւն
է ստանում Թիֆլիսի նահանգապետի «Գիւ-
ղատնտեսական դրամադուլ» անունով ծը-
րագիրը, որի մասին «Մշակ» խօսել է մի
քանի անգամ մանրամասնօրէն:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՐԾԸ

Հաղորդելով այն ռուսալի լուրը, թէ
Թագաւոր Այսրի Բարձրագոյն Հաւանու-
թեամբ թոյլ է տրվում Ռուսահայերի մէջ
հանգանակութիւն անել թիւրքաց շայաս-
տանի սովատանջ ժողովրդին օգնելու հա-

մար, մենք «Մշակ» անցեալ համարում
այն միտքը յայտնեցինք, թէ հարկաւոր է
Հայաստանի մի քանի կենտրոններում, ինչ-
պէս են, օրինակ, Էրզրում, Վան, անմիջապէս
մասնաժողովներ հիմնել, որպէս զի
զրանք ստանան նուէրները և բաժանեն
կարօտ ժողովրդին:

Հարկաւոր ենք համարում կրկին անգամ
շեշտել այդ կէտի վրա:

Մենք մեծ յոյս ունենք, որ Ռուսաստանի
Հայերը այս անգամ էլ մեծ պատուով կը
կատարեն իրանց սրբազան պարտականու-
թիւնը թիւրքաց Հայ կարօտեալներին օգնե-
լու գործում, և չը բաւականանալով մինչև
այժմ հանգանակած գումարներով, կը շա-
րունակեն աւելի առատ, աւելի մեծ նուէր-
ներով օգնել սովեալներին:

Գարնան եղանակների շնորհիւ հաղոր-
դակցութեան ճանապարհները բացված են.
մինչդեռ մինչև այժմ, սարսափելի ցրտի և
ձիւնի պատճառով, Էրզրումի, Տրապիզոնի,
Վանի մէջ եղած յարաբերութիւնները հա-
մարեա կտրված էին, այժմ արդէն ճանա-
պարհները բաց են, և այդպիսով հացա-
հատիկների փոխադրութիւնը, օրինակ, Տը-
րապիզոնից դէպի Էրզրում և նոյն իսկ դե-
պի Մուշի կողմերը շատ հեշտ է: Բացի
դրանից, թիւրքաց կառավարութիւնը բա-
րեհաճել է թոյլ տալ որ մինչև յուլիս ա-
միսը Պարսկաստանից և Ռուսաստանից ցո-
րեն ներմուծվի թիւրքաց Հայաստանի դա-
ւառները, առանց մաքսի: Այսպէս ու-
րեմի, հացահատիկների ներմուծումը դէպի
Էրզրում, Վանի, Մուշի նահանգները թէ
Տրապիզոնից, թէ Պարսկաստանից և թէ
կովկասից վերին աստիճանի դիւրին է,
ճանապարհների բացված լինելու և մա-
սամբ մաքսից ազատ լինելու պատճա-
ռով:

Ահա այդ հանգամանքից պէտք է շտա-
պով օգուտ քաղել և ներմուծել երկիրը
թէ ուտելու ցորեն և թէ սերմացու, քանի
որ տեղական ժողովուրդը չունի ոչ առա-
ջինը և ոչ վերջինը. և այդ պատճառով ոչ
թէ միայն սովի վտանգն է ծանրանում ազ-
գաւանակութեան վրա, այլ և այն, որ սեր-
մացու չը լինելու պատճառով, արտերը
մնում են առանց ցանելու, ուրեմն և ապա-
գայ տարին էլ սովը կարող է կրկնվել:

Բայց որպէս զի կարելի լինի թէ տեղա-

ներից ղեկավարված, աշխատում են դպրոցները
բաղաբից դուրս տանել, որպէս զի կարող լինեն
յատկացնել նրանց մեծ տարածութեան տեղ մա-
նուկների խաղերի համար:

Մեծ, հաւաքական մրցումների համար մեծ քա-
ղաքներում, մասնաւոր Լոնդոնում, քաղաքի մէջ
ահագին հրապարակներ կան, որտեղ մի քանի
հարիւր, մի քանի հազար պատանիներ գնդակ,
կրիկէտ են խաղում կամ վաղի մրցումներ տա-
րում: Բրիտանիայում, Պարիզում նոյնպէս մեծ դե-
տիւններ են յատկացրած աշակերտների խաղալու
համար: Օրինակելի Լիդէյ Մօմօ, կամ Ժանսոն դը
Սայի դպրոցը ամեն օր իր սաներին Բուլօնեան
այգին և Մարդիդեան դաշտն է ուղարկում նոյն
նպատակով:

Մենք յետոյ կը խօսենք այն բարեփոխութիւն-
ների մասին, որ անհրաժեշտ է մտնել մեր
Ժխական դպրոցների պրոգրամի մէջ: Առ այժմ
կանեմք, որ վերջնապէս պէտք է մի փորը էլ մա-
ծել մեր խեղճ մանուկների ֆիզիքական դաստիա-
րակութեան մասին, զոնէ երկարացնելով դա-
սասանի ջոցները և կարճացնելով դա-
սերի տնտեսութիւնը:

Չը պէտք է մոռանալ, որ երբեք երեխան տա-
նը իր ջոյները, եղբայրների, իր ծնողների հետ
այնքան չի զուգործանալ, որքան Ռուսաստանի մէջ,
որտեղ նա իր ընկերակից—հասակակիցների հետ
անձնատուր է լինում իրան հաւաքական խաղերին:

կան օգնութեան գործը կազմակերպել և թէ դրոյց ստանալ նուէրներ, փողով հաս-
նալահատիկներով, անհրաժեշտ է, որ Հա-
յաստանի գէթ պիտաւոր կենտրոններում
կազմակերպվեն մասնաժողովներ, նոյն
խիստ քառակուսի ժողովներին կից:

Առանց այդ տեսակ յատուկ մասնաժո-
ղովներին, անկարելի է ուղարկված նը-
պատաները նպատակին հասցնել: Երեւակա-
յեցէք, թէ այս րօպէիս հաւաքած կայ
դիցուք 50,000 րուբլի, կամ ամբարած կայ
100 հազար պուլ գործն: Ահա՛ պէտք է
ուղարկել, որն է այն հիմնարկութիւնը, որը
պէտք է յանձն առնէ ստանալ այդ փողերը
և ցորենը ու բաժանէ աղքատ ազգաբնա-
կութեան:

Եթէ այդ տեսակ մասնաժողովներ շու-
տով կազմակերպվեն գէթ երեք տեղ՝ Երզ-
րուան, Վան և Տրապիզոն, այն ժամանակ
կարելի է նուէրները անմիջապէս հասցնել
ուր հարկն է: Հէնց այս րօպէիս էջմիած-
նում սովեաների օգտին հաւաքած կայ 30
հազար րուբլի, որի մի աննշան մասն է
գործ դրված, մնացածը կարելի կը լինէր,
առանց րօպէ կորցնելու, հասցնել թիւրքաց
Հայաստան, միայն թէ հիմնական այդ մաս-
նաժողովները: Ռուսահայերի մէջ հանգա-
նակված գումարներով Տրապիզոնի մասնա-
ժողովը շատ հեշտութեամբ կարող կը լի-
նէր ձեռք բերել մեծ քանակութեամբ ցո-
րեն. նոյնը կարելի էր անել և մեր սահ-
մանագիծներին վրայ, և այդ ցորենը ուղար-
կել Երզրուան ու Վանի մասնաժողովներին՝
աղքատ ազգաբնակչութեան բաժանելու հա-
մար:

Տեղական մասնաժողովներ հիմնելը և դը-
րանց գործունէութիւնը, բացի ուղղակի նպա-
տակին ծառայելուց, կուենար և մի ուրիշ,
շատ կարեւոր օգուտ: Նրանք թոյլ չէին տալ,
որ թիւրքաց-Հայաստանից սովեաները խումբ
խումբ գաղթէին դէպի մեր կողմերը, դէպի
օտար երկրները, օգնութիւն ստանալու
յոյսով, և այդպիսով ազգաբնակչութեան
Հասանելի նպատակը կը տրվէր նոյն իսկ բուն
երկրի մէջ, նոյն իսկ հայրենի օջախում:
Իսկ դա շատ կարեւոր է մանաւանդ այն
պատճառով, որ ինչպէս յայտնի է, մէկ ու
կէս ամիս յետոյ գաղթականները, մեր կա-
ռավարութեան որոշման համաձայն, պէտք
է թողնեն Անդրկովկասի սահմանները և
վերադառնան իրանց երկիրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՔՆԵՐ

Ժողովրդական աղէտների ժամանակ, երբ ե-
րաշտի կամ այլ զգալի վնասներ պատճառով
ժողովուրդը զրկվում է ապրուստի միջոցներից, մեծ
օգնութիւն կարող են հասցնել հասարակա-
կան աշխատանքները, որոնց համար վար-
ձվում են կարտեայ տեղերի բնակիչները:

Ինչ ասել մենակ խաղաղող երեխայի մասին:

Մատաղ երեխաներին, մինչև 10—12 տարե-
կան հասակը, պէտք է սովորեցնել աշխատի խա-
ղեր, որոնց մէջ վաղը, թուիչները վարժութեան
հիմքն են կազմում: Մի և նոյն ժամանակ պէտք
է կամայ-կամայ մտցնել և այնպիսիները, որոնցով
մարդկույթ են թնկեր: Սրանք են՝ գնդակա-
խաղը, կոճին (ձան), լէվուլը, չրջանակը (սե-
սո), փետրագունդը (ВОЛАНЬ) և այլն: Չը պէտք է
խոյս տալ նաև աշխատի խաղերից, որոնց մէջ երե-
խաները ազմուկ հանեն, հրեն միմեանց ու քաղեն, ինչ-
պէս ասում է լազրանքը: Որքան փոքր լինի երեխան,
այնքան շուտ շուտ պէտք է փոփոխել խաղերը:
Այս խաղերից ամենաօգտաւէտը և ամենազրա-
ւիշ անտարակոյս գնդակախաղն է, որը զարմա-
նալի զարգացման է հասցրած արտասահմանում
և որը, մեր կարծիքով, անպատճառ դպրոցական
մարզութիւնների հիմնաքարը պէտք է դառնայ:
Աւելի մեծ հասակում (12—20), կարելի է
թոյլ տալ թնկել գլխատարակական մարզութիւն-
ներ մինչև անգամ ապարանների վրայ, ով կարող
է, և նոյնպէս հաւաքական միատեսակ շարժում-
ներ, ուսուցչի ղեկավարութեամբ, ինչպէս այդ
լինում է, օրինակ, զինուորական մարզութիւն-
ներին ժամանակ:

Փոքր հասակում տարբերութիւն չը կայ տղայի
և աղջկայ մէջ ֆիզիկական կրթութեան տեսակէ-

Ռուսաստանում, վերջին սովի միջոցին, կառա-
վարութիւնը կազմակերպեց մեծ չափով հաս-
նակական աշխատանքներ, զանազան զբաղմունք-
ներ՝ ժողովրդի բանւոր մասի համար:

Այժմ դիտարկութիւն կայ հասարակական աշ-
խատանքների գործին տալ աւելի կանոնաւոր, մը շ-
տական կազմակերպութիւն: Ներքին գործերի մի-
նիստրութիւնը այդ խնդրի առթիւ հարցեր է
նախադրականների և զինուորականների կարծիքները և
ներկայումս մշակում է այնպիսի հաստատութիւն-
ների ծրագիր, որոնք մշտապէս պէտք է զբաղվեն
հասարակական աշխատանքների գործով:

Կարեւոր է դատելով այդպիսի աշխատանքներ
կազմակերպելու ժամանակ յարմարել տեղական
հանգամանքներին և պայմաններին: Թոյլ պէտք է
տրվի ամենապահ կերպով գործերի քննութիւն
վերահստակութիւն՝ աւելորդ ձևականութիւններով
չը խանգարելով աշխատանքներին հակոցների գոր-
ծողութիւնները. սակայն դրա հետ միասին թոյլ չի
տրվի, որ գործավարութեան պատասխանա-
ւորութիւնը բաժանվի զանազան անձերի մէջ:

ԳԱՂԱԿԱՆ ԿԱՐՏԵԱՆԻՔՆԵՐ

Կարտեան մինչև հիմա կար երկու մասնաժողով-
որոնք օգնում էին տեղացի կարտեաներին և
սովեալ գաղթականներին: Դրանցից մէկը այս
քանի օրերս դադարեց գործելուց: Այդ մասնա-
ժողովը գործում էր նախադրական օգնականի
կնոջ՝ Թիկին Պետանդիկի նախադրականութեամբ,
օգնում էր թէ հայ, թէ ռուս և թէ տաճիկ սո-
վեալ ընտանիքներին, առանց խտրութեան աղքի
և կրօնի:

Այժմ մնաց երկրորդ մասնաժողովը, այն է՝
Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի
վարչութիւնը, որի վրայ է ընկնում գործի ամբողջ
ծանրութիւնը: Վարչութիւնը առայժմ բաւակա-
նաւում է միմիայն աշխարհականութեան թէ կար-
տի կարտեաններին և թէ գաղթականներին: Իսկ
ճաշարանի բացումը սպասվում է մայիսի 5-ին:

Գաղթականների մեծ մասը տեղափոխված է
հայ գիւղերում: Կան այնպիսի հայ գիւղեր, որոնք
պահում են 15—20 տուն գաղթականներ, տա-
լով նրանց կացարան, հաց, վառելիք և այլն: Գաղ-
թականների թւում կան թէ հայ-կաթոլիկներ և
թէ հայ-բողոքականներ: Ինչպէս լսում ենք, Բարե-
գործական ընկերութեան տեղական վարչութիւնը,
առանց խտրութեան, օգնում է և դրանց:

Գաղթականների ժամանակամիջոցը մինչև մա-
յիսի մէկն էր. իսկ այնուհետև նրանք պէտք է
թողնէին կովկասը և անցնէին թիւրքիս: Սակայն
կովկասեան կառավարչապետի թոյլտուութեան հա-
մաձայն, գաղթականները էլի մէկ և կէս ամիս
կարող են մնալ, որից յետոյ պէտք է վերադառ-
նան:

Գաղթականների մեծ մասը Ալաշկերտից է: Կան
գաղթականներ և ուրիշ տեղերից, օրինակ, Կարի-
նից, Մուշից, Խոնուսից, Բասէնից և այլն: Ալաշ-
կերտից են կարտեայ տեղերի բնակիչները:

Ինչ ասել մենակ խաղաղող երեխայի մասին:
Մատաղ երեխաներին, մինչև 10—12 տարե-
կան հասակը, պէտք է սովորեցնել աշխատի խա-
ղեր, որոնց մէջ վաղը, թուիչները վարժութեան
հիմքն են կազմում: Մի և նոյն ժամանակ պէտք
է կամայ-կամայ մտցնել և այնպիսիները, որոնցով
մարդկույթ են թնկեր: Սրանք են՝ գնդակա-
խաղը, կոճին (ձան), լէվուլը, չրջանակը (սե-
սո), փետրագունդը (ВОЛАНЬ) և այլն: Չը պէտք է
խոյս տալ նաև աշխատի խաղերից, որոնց մէջ երե-
խաները ազմուկ հանեն, հրեն միմեանց ու քաղեն, ինչ-
պէս ասում է լազրանքը: Որքան փոքր լինի երեխան,
այնքան շուտ շուտ պէտք է փոփոխել խաղերը:
Այս խաղերից ամենաօգտաւէտը և ամենազրա-
ւիշ անտարակոյս գնդակախաղն է, որը զարմա-
նալի զարգացման է հասցրած արտասահմանում
և որը, մեր կարծիքով, անպատճառ դպրոցական
մարզութիւնների հիմնաքարը պէտք է դառնայ:
Աւելի մեծ հասակում (12—20), կարելի է
թոյլ տալ թնկել գլխատարակական մարզութիւն-
ներ մինչև անգամ ապարանների վրայ, ով կարող
է, և նոյնպէս հաւաքական միատեսակ շարժում-
ներ, ուսուցչի ղեկավարութեամբ, ինչպէս այդ
լինում է, օրինակ, զինուորական մարզութիւն-
ներին ժամանակ:

Փոքր հասակում տարբերութիւն չը կայ տղայի
և աղջկայ մէջ ֆիզիկական կրթութեան տեսակէ-

Ռուսաստանում, վերջին սովի միջոցին, կառա-
վարութիւնը կազմակերպեց մեծ չափով հաս-
նակական աշխատանքներ, զանազան զբաղմունք-
ներ՝ ժողովրդի բանւոր մասի համար:

կերտի գաղթականները կազմում են ամբողջ գաղ-
թականութեան ամենաանհամարելի մասը: Դը-
րանց չէ կարելի համեմատել միւս գաղթական-
ների հետ: Ալաշկերտի գաղթականները այն կար-
ծիքի են, որ իբր թէ ռուսահայերը, կար-
տի տեղական ազգաբնակչութիւնը պարտաւոր
են իրանց կերակրել, և այդ անմիտ դատո-
ղութեամբ, նրանք շատ քիչ են մտածում
իրանց երկրը վերադառնալու և նորից հաստատ
ընկնելու գցելու մասին: Դաւան ընդհանրապէս
ընկալում են նրանց. «Այսօր, վաղը օգնեցինք
ձեզ, իսկ միւս օրը չէ որ դարձեալ պիտի վե-
րադառնաք ձեր հայրենիքը և ձեր գործին»: Բայց
նրանք պատասխանում են, որ այստեղից էլ վե-
րադառնալու չեն, ինչ և չը լինի: Անկասկած դը-
րա պատճառն այն է, որ իրանց երկրում նրանց
ծանր վիճակ է սպասում: Բայց և այնպէս, ամեն-
քին յայտարարվում է, որ ամիս ու կեսից յետոյ
պէտք է վերադառնան:

Կարս.

ՍՈՎԵՏԱՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Երևանի և Կարսի նախագահների և
գաղթական սովեաների օգտին.

1) Պաշտպանական, Ստեփան Գասպա-
րեանցի միջոցով, 150 րուբլի, որ հանգանակված է
Բարեգործի և Մեշէրիսերի վաճառականների մէջ:
Ուրեմն նախկին 526 րուբլի 87 կ. հետ այժմ
ունենք 676 րուբլի 87 կոպէկ:

Այսօր, մայիսի 21-ին, ուղարկեցինք.

1) Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւ-
ղին, 100 րուբլի, յօգուտ ձրի ճաշարանի:

2) Կարս, Բարեգործական ընկերու-
թեան ճիւղին, 100 րուբլի:

3) Նոր-Բայազետ, Բարեգործական ընկե-
րութեան ճիւղին, 100 րուբլի:

Ուրեմն մեզ մօտ մնում է 376 րուբլի 87 կոպէ:
Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 5007 րուբլի 72 կոպէ:

ՌՈՒՍՍԻՅ ՌԱՏՐՈՆ

Ռուսաց դերասանները ընկերութեան դրամա-
տիկական ներկայացումները երկ վերջացան: Ամ-
սին 19-ին, հինգշաբթի, նախապիւրջին, իսկ ուր-
բաթ, ամսին 20-ին, վերջին ներկայացումն էր:
Հինգշաբթի օր խումբը ներկայացրեց Վիկտոր Ա-
լեքսանդրովի ֆրանսիական «Ջանգալի մէջ» աշ-
խարհ: Կամէդիայից բարձր փոխադրութիւնը:

Կամէդիայի սիւժետն այն դատարկութիւնը և
ձանձրութիւնն է, որ տիրում է բարձր արիս-
տօկրատիկական շրջաններում, որտեղ միայն ցոյցի
և արտաքին ձևի համար զբաղվում են, կամ
ձևացնում են, թէ զբաղվում են, լուրջ դրա-
կանական և գիտական հարցերով, որտեղ, ի
դէպ թէ անդէպ, զանազան հուշակաւոր մտա-
ծողները ասացուածներով համեմտում են ի-

նստած տեղը: Դրա պատճառն այն է, որ նրանք
մինչև անգամ և րկուստի վրա կանգնել չը
գիտեն և ոչ երկուստեք վրա նստել... Գա-
մի վերին աստիճանի ցաւայի իրողութիւն է, ու-
րի վրա մենք հրաւիրում ենք մեր մանկավարժների
ուսուցչութիւնը: Այս «արտաւոր դիքերը» (atti-
tudes vicieuses) մեծամեծ վնասների պատճառ են
դառնում և ամեն ջանք պէտք է գործ դնել ուղ-
ղելու նրանց: Իսկ այս հարաւոր է միայն հա-
մապարսկան վարժական միջոցով:

Վերջացնելով թող ներվի մեզ յուսալ, որ մեր
դպրոցական գործերի ղեկավարները անուշադիր
չեն մնալ այլ ևս դէպի մատաղ սերնդի ֆիզիկա-
կան կրթութիւնը: Ուսումնարանը, որքան էլ ա-
ջող լինեն նրա առողջապահական պայմանները,
անհրաժեշտաբար պէտք է աղքի աշակերտի ֆիզի-
քական կարողութիւնը, մինչև անգամ անբուժելի
տեսակ խանգարումներ, մինչև անգամ անբուժելի
հիւսանդութիւններ օրինակ... օդնաշարի ծաւալներ,
ներդաշնութիւն, կարճատեսութիւն, որոնք հա-
մարեա թէ ուսման արբանեակներն են: Մի միջոց
միայն կայ այս չարիքի դէմ առնելու, ինչպէս
ցոյց է տալիս ֆիզիոլոգիկան և ինչպէս վաղուց
արդէն ապացուցել է փորձը.— այդ ֆիզիքական
կրթութիւնն է, և այն էլ վերեւ բացատրված ձևի
կրթութիւնը:

Պէտք է մանկան որքան կարելի է յաճախ և

բանց խօսակցութիւնը, թուականներ նման կըրկ-
նելով այս կամ այն պրօֆէսորի դասախօսու-
թեան մէջ արտայայտած մտքերը, որպէս զի մի-
այն ցոյց տան, թէ իրանք ևս կարողում են ու-
սումնական գրքեր: Բոլորը դուրս են սարսափե-
լի տաղտկութիւն այդպիսի երեկոյթների ժամա-
նակ, դուրս են, որ միմեանց խաբուում են, բայց
յաճախում են այդպիսի երեկոյթներ, որով-
հետեւ այդտեղ ամեն մարդ իր գործն է տեսնում
և դրստում, այդտեղ հող է պատրաստվում դա-
նազան չաղ պաշտօններ, չքանչաններ ստանա-
լու:

Ահա այդպիսի սալօններից մէկն է կոմսուհի
Բուխանովայի սալօնը, որտեղ հաւաքվում է Պե-
տերբուրգի ամենաբարձր ազնուականութիւնը,
որտեղ մօղային պրօֆէսորը, գիտնական արեւե-
լազէտը և նոր գրող-վիպասանը առանձին, մեծ պա-
տիւ են համարում լինել: Ի հարկէ, կոմսուհու
ետեկը, նրա սալօնից դուրս ամենքը ծաղրում են
նրան, այդ փռօն և արուեստական ուսումնական
նուշութիւնը, այդ անքնական ժողովները, և հա՛ա մի
անգամ կոմսուհին ինքն իր ականջով լսում է իր
սալօնը յաճախող մի փոքր-նախադրականի ծաղրը,
երբ վերջինս կարծում էր, թէ միայնակ է և իր կը-
նոջ հետ խիստ կերպով դատաւիտում էր այդ
արիստօկրատների նիստ ու կացը, խօսակցութիւ-
նը և ուսումնականութիւնը:

Պիւսի մի քանի տղայերը շատ լաւ են գծադրված:
Այդ էլ են և մի քանի խաղաղօդներ: Մօղային
պրօֆէսորի դերը կատարեց Բոչկին-Կոստով, որը
առաջնադաս կերպով դուրս բերեց այն գիտնա-
կանի տիպը, որի համար գիտութիւնը ծառայում
է միայն իբրեւ պատուանդան՝ փառքին և բարձր
աստիճաններին հասնելու:

ՆԱՄԱԿ ԱՐԱՍԹՈՒՄԱՆԻՑ

Մայիսի 15-ին

Այսօր, երեկոյեան ճիշդ ժամը 6-ին, Օգոստա-
փաւ Կայսրուհին, ուղեկցութեամբ Մեծ Իշխանու-
հի Կոնստանտին Ալեքսանդրովիչի և Մեծ Իշխան Ա-
լեքսանդր Միխայլովիչի, ժամանեց Արասթու-
ման: Ընդունելութիւնը փառահեղ էր: Առաւօ-
տից բոլոր ընկալարանները, ամբարանները և
շուկաները զարդարված էին դրօշակներով, վնե-
ղներով, փնջազարդ տերեւներով և ծաղիկներով:
Ջորանոցի հանդէպ և ջրվեժի կամրջի մօտ
չքեղապէս պատրաստված էին կամարներ, ընդար-
ձակ տարածութեան ծաղիկշղթաներով, լապտեր-
ներով և դրօշակներով զարդարված, ճանապարհի
երկու կողմի ուղղութեամբ: Որ կողմ որ նայում
էիք՝ նկատում էիք մեծ հեղատարութեամբ
պատրաստած հրապուրիչ տեսարաններ: Գաղ-
թական հասարակութիւնը, տոնական շրջերով, ձե-
մուկ էր բուլվարներում, կամարների և պալատի
մօտերը, սպասելով Օգոստափաւ Հիւրի—Կայսրու-
հու գալիստեան: Ցանկաւոր հեռուից լսվեց ռուսա-
յի՝ ուրախալի ձայնը: Պալատի մօտ, գաղթակա-

որքան կարելի է երկար ժամանակով միջոց տալ
վաղվելու, թուշկոտելու, հրկուտ, աղմուկելու, երգե-
լու և իր բնազդովին հետեւելու իր խաղերի
մէջ, և երեք չը կաշկանդել նրա շարժումները
երկար ժամանակ ոչ դաստաւան մէջ և ոչ
դուրսը:

Մեր դպրոցական կարգերը իրանց երկար դա-
սերով և 5 րօպէական դասամիջոցներով, կարծես
հնարված են մեր մանուկներին ֆիզիքապէս վը-
նասելու համար: Գատափիջոցներին այս խեղճերը
ժամանակ չեն ունենում մի քանի րօպէ օդ ան-
գամ ձգելու, արտաքին անգամ քնալու... և զան-
գը հրաւիրում է նրանց կրկին դատարան... Եւ
այդ մի քանի րօպէներումն անգամ մանկավարժը
խեղտած է պահում ողորմելի երեխաներին, կաշ-
կանդելով նրա ոտները, թնկեր, զլիւի, աչքերը և
ականջները: Գործունէութիւնը՝ դոյզ-դոյզ
կանգնեցնելով նրանց, մի կողմի նայել տալով նը-
րանց, յաճախ անախարժ տաղեր երգել տա-
լով...

Պէտք է վերջ տալ այս բոլորին: Գարջը հա-
զի կարողաւորել է սովորեցնում մեր մանուկ-
ներին, և դրա փոխարեն նա ֆիզիքապէս կործա-
նում է նրան: Գա մի յանցանք է, որը կատար-
վում է յանուն ռուսման և կրթութեան:

ԲՅՈՒՅԱԿՈՒՄՈՒՄ

Պէտք է մանկան որքան կարելի է յաճախ և

